


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՆՓԻԱՐ

Նամակ կամ որ եւ է գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ
Պագար Մուրուր, ԳԱԶԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՐ ԼՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԷԲՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եզրագրութիւն և սխար սրեկն. ողջ դի. 80
՝ ՝ վեցամսեայ ՝ 50
Օսար եւկիրներ տարեկան ծրագր 25
՝ ՝ վեցամսեայ ՝ 14
Թղթատարի ծախքը խմբագրութեան վրայ է :

Խմբագրութեան ուղղութեամբ ևս
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր :

ՄԵՐ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Յաջողութիւն մը պարզապէս, որուն համար հպարտանալու իրաւունքը ունենալ կը կարծենք :

Մեր ակնկալածէն շատ աւելի համակրանքով պատասխանեցին մեր ընթերցողները այն կոչումին զոր իրենց կողմէնք ասկէ եւրեք շաբաթ առաջ :

Ամեն հասակի և ամեն դասակարգի պատկանող անձնաւորութիւններ, անշափահաս օրիորդը, կենցաղաւոր երիտասարդը, ծանրաբարոյ և պատկառելի ծերունին, նոր հարսը ու գարեջրական սղարը, աղքատը և հարուստը ամենքն ալ գովելի փութկոտութեամբ իրենց նուէրները մեզի զրկեցին և իրենց այդ աշակցութեան մէջ այնքան աղնիւ տրամադրութիւն մը և այնքան բարի համակերպութիւն մը ցուցին որ պատիւ կը բերէ իրենց կենցաղագիտութեան և զգալու եղանակին :

Իրաւ է թէ մեր պաշտպանած նպատակը այնքան համակրելի էր ինքնին որ ատոր յաջողութեան մէջ փառաւորութեամբ իրաւունքը աւելի նուիրատուներու ինքնաբեր շարժումին կը պարտինք քան թէ մեզի որ անձնապէս ոչ մէկուն դիմեցինք : Հետեւաբար հաճելի պարտականութիւն մը կը համարինք մասնակից ընել զիրենք այն սրտի գոհունակութեան և վաշելքին զոր ունեցանք անցեալ օր, երբ այդ փոքրիկ գաղթականներուն շօշափելի ապացոյց մը տուինք իրենց վրայ մեր ամենուս ունեցած գուրգուրանքին :

Չորս տարեկանէն մինչեւ տասնը եօթը տարու քառասունի մօտ գաղթական երկսիւս մանուկներ խթման իրիկունը իրենց կօշիկներուն կսպասէին եկեղեցիին բակին մէջ : Ամենուն դէմքին վրայ գոհունակութեան և մանկական անաքօղելի ուրախութեան ժպիտ մը կար : — Նա՛ ծօ՛, կը պերհն կոր :

Ահա՛ այդ երեք բաւով ողջունեցանք երբ իրենց յանձնելու գացինք մեր բարեկամներու կողմէ զրկուած կօշիկները :

Ինչ սիրուն մանուկներ կան ատենց մէջ. ցնցոտիներու փաթիլումը կենդանի պէպէքներ են շատերը, իրենց վիճակին անգիտակից, խաչոր աղւոր աչքեր ունին որոնց մէջ խեղճութիւնը գեռ ժամանակ չէ ունեցած իր տխրաստուեր ցոլքը գնելու : Կը վազեն, կը

չըլապատեն զմեզ իրենց փոքրիկ ստեղծման կայնելու հապճեպին մէջ, աղքատութեան և չքաւորութեան ամենէն տխուր պատկերը տեսնել կուտան մեզի որուն հանդէպ կզգաս թէ որքան անուշ է կարենալ տալը և որքան գեղեցիկ բան է դիմալը :

Երբ գուլպաները, կօշիկներն ու գլխարկները յանձնեցինք, այսինքն հագցուցինք, հաճոյք մը եւս ունեցանք իրենց խոտանալու մէյմէկ ձեռք հագուստ զոր Փարոսի հանդանակած գումարը, 2643.1/2 դրուշ կը ներէր մեզի տալ իրենց :

Ոգեւորութիւնը մեծ եղաւ այդ մանկական երամին մէջ :

Ժամանակը շատ կարճ էր այդ հագուստները Ծննդեան տօնին հասցնելու : այդքան գումարի չէինք սպասեր արդէն, երբ այս հրաւերը կարդացինք. հետեւաբար անմիջապէս պիտի ձեռնարկէնք հանդերձներու գնման :

Ինչպէս կը տեսնուի մեր երրորդ երեսին մէջ դրուած հաշուէն, կը յուսանք կարելի եղածին չափ վայելուշ կերպով կոկել մեր փոքրիկ բարեկամները :

Այս նիւթական և բարոյական հաշուետուութիւնը ներկայացուցած ատեննիս չենք կրնար մեր խորին շնորհակալութիւնները չի ներկայացնել ամեն անոնց որոնք գեղեցիկ օրինակ մը տուին պարտաճանաչութեան, իրենց նուէրները զրկելով այդ բարեգործական նըպատակին :

Այդ մանուկներուն աղօթքը և անոնց ծնողաց երախտագէտ զգացումներուն արտայայտութիւնը մեր նուիրատուներուն փոխանցելով՝ ամենէն գեղեցիկ երախայրէքն է որ կրնայինք մատուցանել մեր հանգանակութեան մասնակցողներուն :

ՀԱԿԱՌԱԿ ՀՈՍԱՆՔՆԵՐ

Բո՛սկրե՛ իր եւրոպական Սուրհանդակի քաղուածին մէջ հետեւեալը կը հրատարակէր երկուշաբթիի թիւով .

Մեծ Տէրութեանց Կ. Պոլսոյ գեսարանները չորս Զարեհական մը ստացած են Լոնտոն հայրական նոր գօմիթէն (Հնչակեան նորակազմ վարչութիւն) : Այդ պաշտօնագիրը գիւսնադիտութեան կը վերագրէ մինչեւ ցարդ կատարուած բանակցութիւններուն անյաջողութիւնը և յոյս կը յայտնէ թէ եւրոպական գոհիւնները անցեալէն աւելի լուրջ Զանգեբ պիտի ընեն խոտացուած բարենորոգումներուն գործադ

րութիւնն ապահովելու համար : Շրջաբերականը ըստ պատճառի չի պարունակեր :

Ժողովայն էժիքսիէն ալ իր երեքշաբթիի թիւով, եւրոպական Սուրհանդակի բաժնին մէջ կը հրատարակէր հետեւեալը .

Հակառակ Հնչակեան գօմիթէի յայտարարութիւններուն, Դրօշակեան գօմիթէն սպառնական նոր նախաձեռնութիւն չի ցուցնէ :

Ծ Ա Ղ Կ Ե Մ Ա Ր Տ

Բարեկամական շրջանակի մէջ վիճարկութիւն մը բացուեցաւ Ծննդեան տօնեւրոսի մասին, որոնք ժողովուրդին ուշադրութիւնը աւելի կը դարձունեն եկեղեցիին վրայ :

Դիտողներ եղան որ, թէև վայելուշ հագուած տաճար մտնելը զովելի նախաձեռնութիւն մըն է, սակայն բաժնեկիցի լիզակին (boutonniere) զոյգ մը վարդ կամ պղտիկ ծաղիկներով մը անցունելը մաս չի կազմեր այդ նախաձեռնութեան և մինչեւ մէկ աստիճան աշխարհիկ կեանքի երեւոյթ մըն է, անհամապատասխան այն երկրագործութեան զոր պէտք է ունենանք Աստուծոյ տան մէջ :

Ուրիշներ կը պատասխանեն թէ ծաղիկը նախկին նկատուած է ամեն տեղ ու ամեն ժամանակ : Թէ նոյն իսկ խորանը կը զարդարուի ծաղիկներով, Գրիստոսի գերեզմանին ծաղիկներ կը նախկինք, սիրելիներու դագաղին վրայ ծաղիկներով կը զնենք. ինչո՞ւ ուրեմն կարելի չըլլայ բոլորակին վրայ զոյգ մը վարդ անցուցած կենալ եկեղեցին :

Շահեկան ու օգտակար սեպեցիներ այս վէճի փոխադրել Փարոսի Էջերուն մէջ և հրատարակու հրաւեր կարդալ հետաքրքրութեամբ, որ իրենց կարծիքն հաղորդեն մեզ, — պայմանաւ սակայն որ կարճ, աւելի գրուածներ ըլլան, ո՛ր կողմին տեսութեան ալ որ հակին : Պիտի հրատարակենք զանոնք Ծաղիկեմարտ խորագրին տակ :

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Շաբթուս սկիզբը յաջորդաբար հասած երկու հեռագրեր բաւական ուշադրութիւն գրաւեցին : Ադոնցմէ մէկը, Կ. Պոլսէն, հետեւեալը կը հաղորդէր .

Ռուսական նոր դեսպան Պ. Չիտովիէֆ անմիջական ունիւղրութիւն մը խնդրեց Սուլթանէն ի մասին Կրէտէի գործերուն : Կը հաւատան թէ պիտի պնդէ որ Յունաստանի Եօրկիոս իշխանը կողին կուսափորէ տնտեսութիւն : Հակառակ պարագային մէջ՝ Ռուսիա պիտի առաջարկէ որ Կրէտէ Յունաստանի կցուի :

Երկրորդը, Լոնտոնէն, կաւեցունէր .

Անգլիա և Ֆրանսա տրտմալոր են ընդունենալու Եօրկիոս իշխանին ընտրելութիւնն իրեն կուսափորէ Կրէտէի, բայց կը կարծուի թէ Գերմանիա պիտի ընդդիմանայ :

Այս երկրորդ հեռագիր արդէն իսկ տաւակոյս կը ձգէր անոնց մտքին մէջ որոնք ա-

առջինն են ներշնչուելով պահ մը կարծած էին թէ Ռուսիա իր քաղաքականութիւնը պիտի փոխէ Յունաստանի նկատմամբ: Գերմանիոյ ընդդիմութիւնը կը ցցուի մէջտեղ, այդ եւրեք պետութեանց դէմ: Հինգշաբթի իրիկուննոր հեռագիր մը եկաւ հաստատել թէ Գերմանիոյ ուժը բաւական է Թուրքիոյ մերժել տալու համար ինչ որ պահանջել կը միտին Ռուսիա, Անգլիա և Ֆրանսա: Այդ հեռագիր կրտէ. «Սուլթանը իմացուց Պ. Չէնովիէֆին թէ Յունաստանի Եօրկիոս իշխանին Կրէտէի կառավարիչ անուանումը հակառակ է օսմանեան կայսրութեան շահերուն»:

Գերմանիոյ կայսեր ի Պաղեստին ճամբորդութեան ուղեգիրը սապէս որոշուած է: Ապրիլ 13ին, Վիլհէլմ Բ. իր երկու զաւրներուն հետ Համպուրկէն իր զբօսանաւը պիտի նստի որ Բօր Սայիտ պիտի գայ. անկից, կայսրը կ'ամ Եաֆա պիտի անցնի, երկաթուղիով Երուսաղէմ երթալու համար և կ'ամ Կարմիր ծովի ճամբան պիտի բռնէ, անսպասէն ուղեւորելու համար... Լօզիի պէս: Վերադարձին, յունիսի սկիզբը, կայսրը թերեւս քանի մը օր կ'անգ առնէ Կ. Պոլիս, ուսկից Իտալիա պիտի երթայ Ումպէրթօ թագաւորին այցելութիւն տալու:

Կ. Պոլսէն յունիս 10 թուականով կը գրեն եւրոպական թերթի մը. «Օրուան մեծ լուրն է Բերայի հոլանտական դեսպանատան բակը ձգուած նամակ մը որուն ստորագրութիւնն անընթեռնի է: Այդ նամակի մէջ ըսուած է եղեր թէ Ռուսիա գլխաւոր արգելքն է Թուրքիոյ ժողովուրդներուն — հայ, կրէտացի ինչպէ՛ս նաեւ տաճիկ — վիճակի բարւոյն և կը վերջանայ սպառնալով որ եթէ ռուսական այս քաղաքականութիւն անմիջապէս չի բարեփոխուի, ռուսական դեսպանատունը օդը հանելու» ծրագիրը պիտի գործադրուի:

Պէրութի նաւահանգիստին մէջ, Մէսսաժրիի էֆաթօն չողենաւէն Ալի Ալֆի պէյ անուն թուրք երիտասարդի մը բռնուելուն և օսմ. իշխանութեանց յանձնուելուն պարագաները սապէս կը պատմուին: Ալի Ալֆի պէյ որ ներքին գործոց նախարարութեան պաշտօնեաներէն է ու ժէօն Թիւրքի կուսակցութեան կը պատկանի, Կ. Պոլսէն այդ շոգեւ նաւը ապաստանած էր ոտտիկանութեան ձեռքը չիյնալու համար: Փրանսական դրօշին պաշտպանութիւնը խնդրելով: Երբ էֆաթօնը Պէրութ հասաւ, ֆրանսական հիւպատոսին փոխանորդն իրողութիւնը իմանալով չողենաւ գնաց և հսկողութեան տակ առնել տուաւ թուրք երիտասարդը: Յաջորդ տուաւ օտուն, հիւպատոսը՝ Պ. Սուառ անձամբ չողենաւ գնաց թուրք պաշտօնեաներու և ոստիկաններու հետ որոնց յանձնեց փախտաւականը: Այս վերջինը չողենաւ յէջէն բողբոջադիր մը գրեց նրանայի արտաքին գործոց նախարարին ուղղուած: Թուրք ոստիկանները յայտարարած էին հիւպատոսին թէ Ալի Ալֆի իր կինը սպաննած ըլլալու ամբաստանութեան տակ կը գտնուի:

Թայլանդին Կ. Պոլսոյ թղթակիցը կը գրէ թէ զեապանական շրջանակներու մէջ տիրող կարծիքին նայելով, կրէտական ինքիւն այն ատեն միայն գործնական լուծում մը պիտի

ստանայ երբ Թուրքիա հեղինական պատերազմին վերջին հետքերն անհետանան, այսինքն պատերազմական տուգանքի վճարումն ստացահովուի և Թեապլիան պարսպուի Պ. Չէնովիէֆի անդրանիկ դիմումին անյաշուք ելքը կը հաստատէ այս տեսութիւնը զոր օր տուալ ըրած էր Թայլանդ:

Թուրք բանակցութեան մոտած էր Պէրլինի Տէօյլ Պանը դրամատան հետ, 400,000 ոսկիի կանխավճար մը ստանալու համար ի հաշիւ Անատօլուի երկաթուղեաց շահագործման որ այդ պահըային ձեռքն է: Թէեւ վերջնական պայմաններու վրայ համաձայնած չեն տակաւին, բայց արդէն իսկ 400,000 ոսկիի թերհաշիւ մը ստացեր է Մայիէն այս օրերս:

Փրանսական դեսպան Պ. Գանպօն ամսոյ 17ին Կ. Պոլիս վերադարձեր է Բարիզէն:

Երէկ իրիկունն հեռագիրները դարձեալ տագնապալի լուրեր կը բերեն Կրէտէ: Քանտիա շրջակայքը արիւնալի կռիւներ տեղի ունեցեր են քրիստոնէական և իսլամներու միջեւ: Միեւնոյն ատեն իւրիւրէր կը հազարդէ Լոնտոնէ թէ Պ. Չէմպլըքն ատենախօսելով ի Լիվըրքուլ ըսեր է թէ կը ցաւի եւրոպական համաձայնութեան անդօրութեանը վրայ ի մասին Կրէտէի և յոյս յայտներ է որ Մեծն Բրիտանիա չի պիտի հարկադրի առանձին գործելու:

Ա Յ Ժ Մ Ե Ռ Ի Թ Ի Ի Ն

ԱՐԳԻՆՈՒՄ ՆԵՐԱՅԱՅՈՒՄ

Երբ յոյները պատերազմի մէջ չի կրցան յաղթել թուրքերուն, գոնէ յաղթանակը տարին... քաւերական ներկայացում մը արգիշելով որ իրենց պարտութիւնը կը ծաղրէր շահ գոնիկ կերպով:

Դեպքը տեղի ունեցաւ այս կիրակի գիշեր, Աղեֆասնորիս: Արաքական Էլ-Սիւրակ Էլ-Սիւնի (Շրացումնող Լոյս) ընկերութիւնը որուն յայտագիրն է եղեր «վառ պահել Եգիպտոսի ընկի ժողովուրդին հայրենասիրութիւնը՝ հրատարակութեան միջոցաւ», ներկայացում մը կազմակերպած էր այդ գիշերուան համար, Ապպա Նիլի քաւերական: Քաղաքին մէջ իմացում ըլլալով խաղին նիսքը, որուն անունը արդէն քաւական էր յոյները գրգռելու «Էտհէմ փաշայի քաւութիւնը և Յոյնի վատութիւնը» քաղաքիներուն խումբեր պատրաստեցան որպէսզի ցոյց մը ընեն եւ ի հարկին քոնոթետաւն արգիշեն: Թատրոնիկն տեղ, Պ. Մոնէթ-Բարօ, ներկայացումն էի առաջ կառավարչին դիմեց որ իսկոյն ուսիկանութեան պաշտօնեաներ խրկեց անկարգութեանց առաջը տունելու համար, քաւերական մոտքը արգիշելով հասարակութեան եւ յայտարարելով թէ ներկայացումը տեղի չի պիտի ունենայ, ինչպէս որ ալ եղաւ:

Այս միջադէպին էն հետաքրքրական կողմը խաղին նիսքն է զոր ընդարձակօրէն պատմած էր Թառ Թէքէսանորի. երկու քաւով զաղապար մը տալու համար, յիշեմ գլխաւոր տեսարանը:

«Պատերազմի էն տաք միջոցին, Սուլթանը յաղթական բազմած է իր գահին վրայ:

տաքերուն տակ դետնամած՝ վեց մեծ Տէրութիւնները անոր մոճակները կը համարեն և դիմութիւնը կը հայցեն որպէսզի թշնամութիւնները դադարեցունէ այլեւս, բայց կայսերական մոճակներն անդրադարձի կը մնան: Յանկարծ բեմ կուգայ Օլիա թագուհին, ինքն ալ կը ծնրադրէ և դանդաղելով Եօրկիոս թագաւորէն, շնորք կը հայցէ Յունաստանի համար: Այն ատեն, Սուլթանը, galamment, շնորհալի թագուհին կը պարգեւէ ինչ որ մերժած էր տէրութիւններուն, — հաշտութեան կնքումը»:

Բոսիլէ՝ ուսկից կարսաւսպենի այս սովորովոր, կաւեցումնէ թէ խաղին մէջ սա տեսակ խօսքեր կան եղեր:

«Ճշմարիտ իսլամները պէտք է աղօթեն Մարգարէին որ երկինք պատուհաս մը տայ աշխարհի, բնաշին ընելով բոլոր քրիստոնէաները և իսլամութիւնը միայն յաղթական պահելով»:

Երբ այս ներկայացում տեղի ունենար, ապահովապէս անոր տեսարանները արտասպելու յարմարագոյն թերթը պիտի նկատուէր... Բարակալուն:

ՆՇԱՆԱԲԱՆՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՍՏՈՒԹԻՒՆ

Կեանքայինները՝

Glissez, n'appuyez pas

Զոր իրենց յատուկ լեզուով թարգմանելով ըսած են.

Glissu-sn'croula

* *

Լատանկարչի մը յարմար պիտի ըլլար Ծանկի գեղը

* *

Ալիսցիներուն՝

Ալիս ընդ տկան եւ հարիւր առ հարիւր, . . . վաւ խառնե՞րը:

* *

Բոկնոյն առ Շիմէ

Հալածումը՝ տարածում է

Ու յիշմանկրի դատին ի վեր:

* *

Արարկիրցիներուն՝

Առ—արբ—կիւր

* *

Գրողականներուն՝

Մարդ ո՛չ կեցցե հացիւ

* *

Թաղականներուն՝

Առե՛ք կեռե՛ք և . . . հաշիւ մի՛ տար:

ԲԱՏԱՄԵՐՍ

Ա Զ Գ Ա Յ Ի Ն

Էջմիածնայ գանձարանէն 200,000 ռուպի գողցուած ըլլալու լուրը, զոր առաջին անգամ հրապարակ նետեց Պոլսոյ Բիզանդիոն օրաթերթը՝ Դաւրէժէ գրուած թղթակցութեան մը յենով, տարակիցս ներքեւ կը մնայ տակաւին:

Վեհ. Հայրապետը որ դեկտ. 27ին Թիֆլիզ ուղեւորած էր, ուր անցուցած ըլլալու է

Ծնունդի տօները, Էլմիստին վերադարձին եպիսկոպոսական ձեռնադրութիւն պիտի կատարէ: Ձեռնադրելի եկեղեցականներուն մէջ կան՝ Երուսաղեմայ Պատրիարքութեան Պոլսոյ փոխանորդը Տ. Գէորգ Ծ. Վ. Երէջեան և Պարսկաստանի Հայոց առաջնորդ Տ. Յովսէփ Ծ. Վ. Սարսենեան:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԱԶԴ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

Ի գիտութիւն բարեպաշտ ժողովրդեան կը ծանուցուի թէ վաղը, կիրակի, Ծննդեան մեծեցի տօնը, եկեղեցական արարողութիւնը պիտի կատարուին Ս. Մինաս մատրան մէջ ըստ հետանց սովորութեան:

10/22 Յունուար 1898

Գաշիկ

(Կնիք Առաջնորդարանի)

Քաղաքիս ծանօթ ազգայիններէն Եւստոֆ Ա. զից պէշի ներամուտը կեցած համակրանքը անգամ մը եւս փայլուն կերպով արտայայտուեցաւ այս հինգ շաբթի օր իր երկու զաւկներուն միտումեան տօնը: Որ տեղի ունեցաւ Ս. Աստուածածին եկեղեցին, ազգականաց և բարեկամաց ընտրեալ բազմութեան օր ներկայութեամբ:

Երախաներէն մեծին կնքահայրն էր Տիար Զայի Երիզըր, որ յատկապէս եկած էր Ազգաբնակչոյն, ու փոքրին՝ Տիգրան փաշա որ Աստուծոյ հօր ուղիւմ նամակով մը յայտարարած էր թէ իր կողմէ ներկայացուցիչ կը կարգէ Տիար Սեդրաք Գաւթեան:

Միտումեան խորհուրդէն ետք, ներկայք մեծարուեցան Առաջնորդարանի որակէն մէջ ուր յայտնեցին իրենց շնորհակալութիւնները:

Երեկոյն, Տէր և Տիկին Ազիզ պէշ սեղան մը տունն որուն յաջորդեց երեկոյն մը Տան տիրոջ աւանդական հիւրասիրութեան և Տիկին Ազիզ պէշի սովորական հաճոյսիրտարութեան շնորհիւ երեկոյն շատ հաճելի ժամեր անցրին: Երեկոյն ետքն երեկոյն և որով փայլուն շատ նպատակեցին տրեւեռեան նուագածուններու խումբը և սառնորդէն մեծարուած շնորհակալութիւն:

Սերտութեամբ կրկնանք թէ հայ երգչուհի Որ. Մանի Մանեանց Գաշիկ կը գտնուի այս պահուս և մտադիր է Տիկին Քոյնտէրի բարեպաշտութեան հովանաւորութեան տակ նուագահանդէս մը տալ ի ժողով Օթէշ Քոնիմանիսի օրունքին մէջ:

Օր. Մանեանց աշակերտած է Միլանի Բոն սերվիստարին ուր կը գտնուի երգի հռչակաւոր բրոֆէսոր Պէլլի:

ՄԵՐ ՀԱՆՐԱՆԱՅԻՆՈՒԹԻՒՆ ՀԱՇՎԻԸ

Փոքրիկ գողթականներուն ի նպատակ քայլուած հանգանակութեան վերջին (9.) ցուցակին համազուտարն էր զրոյ ողջ 2593 50

Այդ ցանկը հրատարակուելէն վերջը ստույգանք	
Եւրոպայի օրհորդէ մը	20
Գեւորտի Օ. Էլիզ Լ. Երէջեան	30
	2643 50

Արով մեր տրամադրութեան տակ ունեցանք ընդամենը երկու հազար վեց հարիւր բաւանք երեք ու կիս զրոյ:

Այդ գումարով գնեցինք 41 զոյգ կոշիկ որոնց համար վճարեցինք (բոս Տիար Ս. Քէրէտէճեանի հաշուեցուցակին) զ. ողջ 644

Օրհորդի Պար փաճառատունէն գնեցինք 3 1/3 տուգինա գուլպա որոնց համար վճարեցինք զրոյ ողջ 93 25

1 տուգինա ֆէս 29
1 տուգինա ալ Տեարք Արիեան եւրոպ նուիրեցին ձրիարար, ինչպէս նաեւ արիւ ազգային մը ինքնաբերաբար վճարեց փիւս կիւլին գինը

763 25

Հետեւաբար հանգանակութեան տեւցած գումարը, ողջ 1880.25 պիտի գործածուի հազուադէպ գնման ինչպէս որ քայլուած ենք մեր այրորտան խիստապահովին մէջ:

Ծնունդի տօներուն տօնիւ, Տիգրան փաշայի ծագիտի ազգիկը՝ Օր. Ինճի տ'Ապրօ չորեքշաբթի իրիկուն մանկական արարահանդէս մը տուաւ ի պատիւ իրեն հասակակից բարեկամակներու, որոնց ծնողները՝ բարձր դասու եւրոպայի ընտանիքներ ինչպէս նաեւ Տիկին Պոյոս փաշա իր զաւկներով՝ մանակեցան հանգիստն ու քանի մը արտօնելի ժամեր անցուցին այդ մանկական զուարթ ոգեւորութեան մէջ:

Պոլսոյ Բիւրակն հանգէտը, որուն արտօնութիւնը անգործածելի կը մնար, տարեգլխէն վերականգնեց հրատարակուել իրեն շարաթաթերթ, տնտէրութեամբ Պ. Սմատ Գաւթեանի և խմբագրութեամբ Պ. Գ. Անդրէասեանի: Յաջորդութիւն կը ժողովենք:

ՏԵՂԱԿԱՆ

Ռարձր. Խաիվը որ քանի մը օրէ ի վեր Մանթազա կը գտնուէր, հինգշաբթի իրիկուն Գուպպէ վերադարձաւ յատուկ կառախումբով: Այս առաւօտ Ապրիլին պալատը գնաց:

— Բամազանի առթիւ, որ սկսաւ այսօր, խաիվական ներում պիտի շնորհուի այն բանատրեւաններուն որոնց պատիժը երեք ամիսէն աւելի չէ:

— Քաւը Էլ Նիլի նորակառուց միւզէին շինութիւնն, որ սկսաւ անցեալ տարի, այս օրերս ընդհատուել է՝ ամբողջութեամբ մասին ծագած վէճի մը առթիւ: Այս դադարում պիտի տեսէ երեք ամիս: Ճարտարապետը Պ. Տուրնիսն յանձնառու է եղեր իր բոլոր իրաւունքներէն հրաժարել ու յատկաձեւերը թողուլ կառավարութեան, եթէ 4500 ոսկիի հատուցում մը ստանայ:

— Եգիպտական երկաթուղիներու վարչութեան նախագահ Պ. Բուպթիստին վերադարձաւ Եւրոպայէն:

— Օսմ. բանակին ի նպատակ հանգանակութեան կատարելու համար անցեալ տարի Եգիպտոսի մէջ կալմուած յանձնախումբը, Կ. Պոլսէն իրեն ուղղեալ ստիպողական հրաւերի մը վրայ այս օրերս վերադարձուաւ: Բիւր իր փաշայի նախագահութեամբ, որոշեք է 4000 ոսկի եւս զրկել:

— Աւլի օրը Նորմանիսի շաքենաւով 200 ամերիկացի թուրիսթ հասան Եգիպտոս:

— Օրլէանի Հանրի իշխանը ամայն վերջը Գահիրէ կուգայ ուր քանի մը օր անցունելէ ետք Հապէշիտան պիտի ուղեւորի:

— Ալեքսանդրական ընկերութեան վերջին նիստին մէջ, որ տեղի ունեցաւ հինգշաբթի օր, Տօթթօր Լինքըն ալ Գաւթի շահեկան բանախօսութիւն մը բրու հարարի մէջ իր բրած ճամբարութեանը վրայ:

Երկուտարող տանտարանը ժամէ մը աւելի խօսեցաւ իրտո հետաքրքրական և նկարուն սնով մը:

Տօթթօր Լինքըն որդին է վախճանեալ Տօթթ. ալ Գաւթի օր շատ յարգուած բժիշկ մըն էր Ալեքսանդրիոյ մէջ, մանաւորապէս հայ գաղութին կողմէ:

— Վերջի մէկ երկու շաբթեան միջոցին ծագիլատի քանի մը գէպքեր պատահած են Ալեքսանդրիոյ մէջ:

— Ալեքսանդրիոյ խաւն գտնաւորանքները Եօրկիոս շաքենալին գտաւ տեսնելով, անոր տիրոջ՝ Հաճի Տալուտի սլահանլու մանտրի գտած են ընդգէմ եգիպտական կառավարութեան:

Նոյն շաքենալին մէջ գտնուող ութսուանի մօտ եգիպտացի զինուորականները որ գերի բռնուած էին Գերջին թուրքահեղինական պատերազմին տառն, կիրակի օր սուսական շաքենալով Ալեքսանդրիա հասան և անկէջ ուղղակի Մ. Գ. Գաւթի ուր պիտի աշխատին խաիվական կալուածներուն մէջ:

ԱԶԴ. — Վստաւելի հայ երիտասարդ մը որ տառնուրական գործերու փորձառութիւն տնի և երկար ժամանակ Եգիպտոսի զիւղերու մէջ առեւտրով զբաղած է և որ կը խօսի արաբերէն տաճիկերէն և յունարէն, փաճառատան մը մէջ պաշտան կը փնտռ իր ծանօթութիւններուն յարմար:

Դիմել Փարոսի խիստապահովին:

ՅՐԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Փետրվար 7ին Ջօլա պիտի գտնուի Սէնի եղեռնագատ ատենին տեղեւ: Սպասելով այդ գատաւարութեան, ամբողջ Պրանտական մասնաւոր ու ժողովուրդը վէճի ու դժգոհան մէջ կը մնան: Ետքմուս սիլիգէն ի վեր Բարիդի հեռագիրները ուրիշ բան չի հաղորդեցին բայց եթէ Ջօլայի դէմ եղած յայտերուն լուրերը: Ուսանողական խումբեր փողոցները շրջեցան գոռում գոչումներով. սակայն խորտակեց տան մը պատուհանները, կարծելով թէ Ջօլային էր: Ոստիկանութիւնը միջամտեց: Լիթիվան անուն անարգելով մը ոստիկաններուն վրայ յարձակելով անոնցմէ երկուքը վիրաւորեց: Հակազդայական յայտերուն խառնուեցան հակահրէտական շարժումներ ալ: Պահ մը հեծեալազօրքն հարկադրուեցաւ հրացան պարպել ամբոխին վրայ: շատեր վիրաւորուեցան: Դրգուումը տարածուած է նաեւ Պրանտայի զիւրաւոր քաղաքներուն մէջ, Նանսի, Պորսօ, Նանթ և այլն: Վերջին լուրերուն նայելով, կառավարական խիստ միջոցներու շնորհիւ փողոցային յայտերը դադարեալ վրայ են:

Պրանտական խորհրդարանին մէջ, Պ. Բաւլենեալ հարցադրուած ուղղեց ի մասին Տրէյ-ֆիւսի գործին. Ժողովը 252ի դէմ 340 քուէով յետաձգեց վիճարանութիւնը, նախարարապետ Պ. Մէլինի յայտարարութեան վրայ թէ երկրին համար ֆրանսական հետեւանքներ կ'ընայ ունենալ այս դժգոհան արժարժումը: Ջօլան դատի կոշեղու շարժառիթ եղած է ընապաշտ վիպասանին հրատարակած «Բայ նամակը» որուն մէջ ամենաժանր ամբաստանութիւններ կ'ընէ Տրէյֆիւսը գատող զինուորական ատենանին անգամներուն դէմ, թէ կողմնակցութեամբ շարժած են ու իրերը խեղաթիւրած:

ԱՅՍ ՕՐՈՒՄՆ ՀԵՌՊԻՐՆԵՐ

Աթէնք, 21 յունուար. — Յունական մամուլը կը կարծէ թէ Կլէմէնի խնդրոյն լուծման միակ եղանակն է Եօրկիոս իշխանին կողմին կառավարիչ անուանումը:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՆԻՈՒԹԻՒՆՆԵՐ

Ենորհակալութեամբ ստացանք Վենետիկի Միթիթարեան տպարանէն հետեւեալ նոր հրատարակութիւնները:

Առուեստարանոքիս կալ Շեքեստարան Գիսեղեաց, հեղինակութիւն Հ. Մանուէլ Վ. Գալուսի:

Բեռնագիր սրճանագրութիւններ Ռուսաց Հայաստանում, բաղաձայն թարգմ. բոֆ. Խաչատուր Յովհաննիսեանցի:

Վեկեհիկ եւ վեկեհեան նկարչութիւն (Իրօյնի Թէն) :

Յուշ եւ Յիշատակի Լոնտոնի, Թարգմ. Հ. Յովհաննէս Թորոսեան :

Փաւստոս Բիւզանդ, Թարգմ. Նոյն :

Նուէր Մանկանց (Ա. Փոլն), Հ. Արսէն Ղազարեան :

Անճրեւոտ գիշեր մը, (Զաւենտ) :

Նայնպէս մեղ զրկուած է Կ. Պոլսէ, Մանրեաքանութիւն, հեղ. Տրթ. Ն. Տաղաւարեան :

Մարդու մը պատմութիւնը, հեղ. Վահան Շահրի Խան, տպագրուած ի Ռուսոնք :

Կալաճէն Ղեւոնդ քահանայ Փափազեան, 1898ի Տարեցոյցը՝ տպագրուած հայերէն եւ ռուսերէն լեզուաւ եւ ազգ. պատմութեան վերաբերող ծանօթութիւններով որոնք յաւելուածը կը կազմեն 97ի տարեցոյցին :

ՀՈՍԿԷ ՀՈՆԿԷ

Անցեալ շաբթու Բարիզ, Բոն-Սէն-Մառթէն թատրոնի հանդիսատեսները միջնաբարի մը միջոցին հետաքրքրութեամբ կը դիտէին Պ. Ֆէլիքս Փօնը որ մտերմաբար կը խօսակցէր Քօքլէնի հետ : Հանրապետութեան նախագահը հին բարեկամ մըն է մեծ կատակերգուին եւ կերպով մը անոր կը պարտի հանրային կեանքի մէջ մտած ըլլալը եւ հետեւաբար արդի բարձր դիրքը : Այն թուականին ուր Ֆէլիքս Փօն կաշիի վաճառական էր, որ մը Քօքլէն ըսաւ անոր. «Այս իրիկուն իմ օթեակս եկէք. ձեզ մէկուն պիտի ներկայացունեմ որ առաջ պիտի տանի զձեզ» : Մանօթացումը տեղի ունեցաւ. այդ մէկը Կամպէթան էր որ հզօրապէս նպաստեց զայն Հալիբի երեսփոխան ընտրել տալու : Մնացեալը յայտնի է :

Պիզմարք՝ իր յօդաքաւերուն վրայ եղած հրատարակութիւններուն առթիւ սա մանրագէտը պատմած է որ իր քաղաքական ասպարէզը թեւակոխելու թուականին կը վերաբերի, երբ Բրուսիոյ դեսպան էր Ռուսիոյ մօտ : Այն ատենէն արդէն ծոնդի ցաւեր ունէր. պահ մը այնքան սաստկացան որ Պիզմարք արձակուրդ խնդրեց եւ Քրօնշթաթէն նաւ նստաւ Սթէթին երթալու համար : Ուղեւորներուն մէջ կը գտնուէր Բիւօկօ անուն նշաւաւոր ռուս վիրաբոյժը որուն խորհուրդը հարցուց Պիզմարք. խնամուտ զննութենէ մը ետք, վիրաբոյժը յայտարարեց թէ ալ ոտքին վրայ անդամատութիւն մը անհրաժեշտ է : Գերմանիոյ ապագայ նախարարապետը առանց յուզման լսեց այս վճիռը. մինակ հարցուց թէ անդամատութիւնը ծոնդէն վեր պիտի կատարուէր թէ վար. Բիւօկօ վերի կողմը տեղ մը ցոյց տուաւ արագ շարժումով մը : Այն ատեն Պիզմարք նեղացաւ. «Նախամեծար կը սեպեմ, գոչեց, մեռնիլ քան թէ մարմնիս այդ մասէն զրկուիլ» : Կէս դար անցած է այդ թուականէն ի վեր, եւ Պիզմարք մեռած չէ, թերեւս նոյն իսկ վիրաբուժին նշխարակին չեն թարկուելուն համար որ գուցէ, անգիտակցաբար, փոփոխած պիտի ըլլար աշխարհի ճակատագիրը՝ եթէ երկաթեայ նախարարապետը համակերպէր անոր խորհուրդին :

PASCHAL & C^{IE}

G. G. MEINERBACHIS & C^{IE}
SUCCESEURS

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՆՈՐԱԶԵՊԻԹԵԱՆՑ
ԵԳԻՊՏՈՍԻ ԱՄԵՆԷՆ ԸՆԴԱՐՁԱԿԸ

ԲԱՍՔԱԼ ԵՒ ԸՆԿ.

Գ. Ճ. ՄԷՅՄԱՐԱՔԻ ԵՒ ԸՆԿ., ՅԱՋՈՐԴՔ
ԳԱՀԻՐԷ ԷՕԶՊԷՔԻԷ ԳԱՀԻՐԷ

Ձմեռնային նորաձեւութեան մետաքսեղէններու, բրդեղէններու եւ այլ այս կարգի ապրանք մեծ եւ բազմաթիւ փաճառում : Բարիզեան վերջին ճաշակով՝ պատրաստուած գլխարկներու յատուկ փաճառումը եւ մօտիւղներու վերաբերեալ նիւթեր :

Ն Ո Ր Ժ Ի Ի Ղ

Անգլիական եւ ֆրանսական սուտեղէններու ինչպէս գերձակներու վերաբերող ապրանքներ :

ՔՐԻՍԹՕՅԼԻ ԱՐԾԱԹԵՂԷՆՔ

Մեծ մթերանոց սեղանի սպասներու եւ խոհանոցի առարկաներու :

ԱՊՐԱՆՔՆԵՐԸ ՏՈՒՆԵՐԸ ԿԸ ՅԱՆՁՆՈՒՆ

Մեծաքանակ գնողներու մասնաւոր զեղչ
10—10

ԳԱՐԹԱԼԻ ԸՆՏԻՐ ԳԻՆԻ

Պոլսէն յաջկապէս բերել տրուած այս սեղանի համար անառաք գինին կը ծախուի Երուսաղէմի Պօղոսեանի խանութը ի Պազար Մուրուր քիւ 42. Գանիք ուր կը գտնուի նաեւ զուտ եւ պատուական օղի :
16—16

ԼՈՒԱՅԱՐԱՐ ԵՒ ԱՐԴՈՒԿԻԶ

Մ. ՏԵՐ ՍԱՀԱԿԵԱՆ

ԺԱՌՏԷՆ ՌՕՍԷՔԹԻ, ՇՐԱՆՏ ԱՋԱՏԵԱՆԻ ՆԱԽԿԻՆ ԽԱՆՈՒԹԸ

ԿԸ ԼՈՒԱՅ ամեն տեսակ ճերմակեղէններու եւ հագուստներ. ԿԱՐԴԻԷ արանց եւ կանանց շապիկներ, չրջագլխաւորներ, եւն. մաքրութիւն, ճշգրտահաշիւներ, եւ խիստ չափաւոր գին :
14—24

Տ Պ Ա Ր Ա Ն

“ՓԱՐՈՍ, ԼՐԱԳՐԻ

Կ Ը Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Ի Ն

ԱՄԵՆ ԼԵՁՈՒԷ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

ՄԱՀԱԶԻ, ՀՐԱԻՐԱԳԻՐ, ԱՅՈՒԲԱՐՏ

ՑԱՆԿԵՐ, ՏԵՂԵԿԱԳՐԵՐ

ՀԱՇՈՒԵՑՈՒՑԱԿ, ՆԱՄԱԿԱԳԼՈՒԽ

Տ Ո Մ Ս Ե Ր

Եգիպտոսի որ եւ է քաղաքէ կամ գիւղէ եկած յանձնարարութիւնները ամենայն խնամօք եւ փութով կը կատարուին :

ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Այցեխարսերու եւ տոմարու

Տպարանը բաց է ամեն օր բացի կիրակի եւ օգոստոսի, առաւօտեան ժամ 7էն երեկոյեան ժամ 7 :

PHARMACIE DE LA POSTE

ԴԵՂԱՐԱՆ Ե. ԱԻԱԳԵԱՆ

ԳԱՀԻՐԷ, ՓՕՍԹԱՅԻ ՇՐԱՊԱՐԱԿ. ՄԱՏԱԹԱՅԻ ԱՊԱՐԱՆՔԻՆ ՑԱԿ

Այս նորաձեւատառ դեղարանին մէջ յաճախորդները պիտի գտնեն եւրոպական լաւագոյն գործարաններէն բերուած թարմ դեղեր, չափաւոր գիներով : Դեղագիրները ամենայն խնամօք եւ ուշադրութեամբ կը պատրաստուին :

Անգլիական եւ ֆրանսական սրբապիքներ : Թարմ հանգալիք ջուրեր, անուշահոտ քիւնք եւն. Բնաւորական եւ մանրադիտական քննութիւնք : Դեղարանս կը յաճախեն հայ եւ օտարազգի ծառայողներ :

Բժշկական ձրի խորհրդածութիւնք աղքատաց համար :
20—50

Ս. ԹԵԼԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ՎԱՃԱՌԱԿԱՆ-ԴԵՐՁԱԿ

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՒՄ, 3 ԹԵԼԻՖԻԳ փառա փողոց

ՇԱԼՈՒՆ ՎԱՃԱՌԱՏԱՆ ԴԷՄ

Կերպաններու զանազանութեամբ ու ընտրութեամբ եւ ձեւի ու ճաշակի կատարելութեամբ այս տան դիմող յաճախորդները գոհ պիտի մնան թէ պատրաստուած հագուստներէն եւ թէ գիններու չափաւորութենէն : Դիւրամատչելի պայմաններ :
4—4

ՅՕԹՕԿՐԱՅԻ ԷԺԻԲՍԻԷՆ

Ք. ՊԻԻԲՄԷՃԵԱՆ

ՇԱՐԱ ՄՈՒՀԱՄԵՏ-ԱԼԻ ԹԻԻ 120

Արհեստին վերջին կատարելագործութեան համեմատ հաստատուած այս լուսանկարչատան մէջ ամեն տեսակ լուսանկարներ կը հանուին գոհացուցիչ գիներով : Ամեն մեծութեան ԱԿՐԱՆՏԻՍԸՄԱՆՆԵՐ :
3—10

Ա. ԼԷԹՈՒԱԼ

Կ. Պօլսոյ մէջ հանրածանօթ ՊՈՍԹՈՐ վաճառատունէն Տեաքք Յովակիմեան Եղրապ այս անգամ հաստատուած են ի Գահիրէ եւ Մուսթի փողոցը՝ Լաթէսի գոհարաւորաւորաւոր զիմաց բացած են վաճառատուն մը ուր կը ծախուին բրդեղէն եւ լամպակեղէն Ֆանելայ, գուլպայ եւ գանձաւոր տեսակ ընտիր շապիկներ, օձիքներ, քեւնոցներ :

Ճիշտ գանձաւորութիւն մարօքներէ, հոսեղէններու եւ արդու գաւղի վերաբերեալ ամեն տեսակ տպրանայ : Շեֆիլթի հոշակաւոր պողպատեայ գործիքներ, ածելի, մկրատ, զմելի եւն. :

ԱՊՐԱՆՔ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ Եւ ԱՆՄՐՑԵԼԻ ԳԻՆԵՐ : Գաւառներէն եկած յանձնարարութիւնք ճշգրիտ եւ փութով կը կատարուին :
17—24

Ո՞Վ ԿԸ ՓԱՓԱՓԻ
Միջակայ 120 դրոշմ վարկով, գինք ունի, կը թէն լարուող, խիստ պիտուէ եւ ընտել ժամացոյց մը թէ՛ կնոջ եւ թէ՛ տղայի համար, թող դիմէ



Խաւս խալիլ փողոց (Ոսկերչաց շուկան) ձեւակերպ մէջ, ուր կը գտնուին նաեւ ամեն տեսակ ոսկի, պղծաթ, անկախաւ եւ նիքել ժամացոյցներ, պատի եւ քծնողի բազմազան լուսանկարներ, ինչպէս նաեւ գոհարեղէնք :
10—12

Le Gérant: Dr. A. S. HAGOPIAN
Տպագրութիւն ՓԱՐՈՍ րազրի